



ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ
ԿԵՆՍԱԿԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ





**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
БИБЛИОТЕКА ИМ. САРКИСА И МАРИ ИЗМИРЛЯНОВ**

**YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE OF ARMENIAN STUDIES
SARKIS AND MARIE IZMIRLIAN LIBRARY**

**АРАМ СИМОНЯН
БИОБИБЛИОГРАФИЯ**

**ARAM SIMONYAN
BIOBIBLIOGRAPHY**

**ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
YSU PRESS
ЕРЕВАН - 2024 - YEREVAN**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Ս. ԵՎ Ս. ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎ. ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 012:929:94

ԳՄԴ 91.9:63

Ս 504

Կազմողներ՝

Ալիկ Ղարիբյան, Վարուժան Պողոսյան,
Հասմիկ Հայրապետյան

Составители:

Алик Гарибян, Варужан Погосян,
Асмик Айрапетян

Compilers:

Alik Gharibyan, Varuzhan Poghosyan,
Hasmik Hayrapetyan

Ս 504 Արամ Սիմոնյան (կենսամատենագիտություն) / Կազմ.՝
Ա. Ա. Ղարիբյան, Վ. Ա. Պողոսյան, Հ. Գ. Հայրապետյան. -
Եր.: ԵՊՀ հրատ., 2024. - 104 էջ:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Հ. Սիմոնյանի կենսամատենագիտության առաջին բաժնում անդրադարձ է կատարվում գիտնականի կյանքին ու գործունեությանը: Երկրորդ բաժինը բովանդակում է Ա. Սիմոնյանի տպագիր աշխատությունների մատենագիտության ժամանակագրական ցանկը:

Մատենագիտությունը կարող է օգտակար լինել պատմաբաններին ու ընթերցող լայն հանրությանը:

ՀՏԴ 012:929:94

ԳՄԴ 91.9:63

ISBN 978-5-8084-2667-2

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426672>

© ԵՊՀ հրատ., 2024

© ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, 2024

© ԵՊՀ Ս. և Մ. Իզմիրլյանների անվ. գրադարան, 2024

Նախաբան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ն. Սիմոնյանի կենսամատենագիտությունը բաղկացած է երկու հիմնական բաժիններից:

Առաջինում զետեղված են գիտնականի կյանքն ու գործունեությունն ուրվագծող կենսագրական համառոտ ակնարկ, քաղվածքներ նրա մասին և նրա հեղինակությամբ հրատարակված տարբեր նյութերից:

Երկրորդ բաժինը Ա. Սիմոնյանի տպագիր աշխատությունների մատենագիտական նկարագրության ժամանակագրական ցանկն է, որը կազմված է ըստ Հայաստանի գրադարանային համակարգում գործող չափանիշների: Մատենագիտությունն ունի առանձին ենթաբաժիններ, որոնցում խմբավորված են Ա. Սիմոնյանի մենագրություններն ու համահեղինակային աշխատանքները, ժողովածուներում և գրքերում ընդգրկված գիտական հոդվածները, զեկուցումներն ու զեկուցման դրույթները, խմբագրած աշխատանքները և պարբերականներում հրապարակված՝ նրա հեղինակությամբ և նրա մասին նյութերը:

Այլ լեզուներով հրատարակված նյութերի խորագրերը թարգմանված են հայերեն, իսկ այն նյութերը, որոնք բնագրերում ունեն անգլերեն կամ ռուսերեն թարգմանված վերնագրեր կամ ամփոփումներ, ներկայացված են նաև այդ լեզուներով:

Կենսամատենագիտությունն ունի նաև պատմաբանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերի, անձնանունների, տեղանունների, հապավումների ու պարբերականների ցանկեր, որոնց թվանշային հղումները համապատաս-

խանում են մատենագիտական նկարագրությունների համարակալմանը:

Մատենագիտության մեջ չեն ընդգրկվել էլեկտրոնային թերթերի հրապարակումները, ինչպես նաև մամուլում առկա այնպիսի նյութեր (հոդված, հարցազրույց և այլն), որոնք վերաբերում են գիտնականի՝ հասարակական կյանքում դրսևորած քաղաքացիական ակտիվությանը:

ԱՐԱՄ ՀՐԱԶԻԿԻ ՄԻՄՈՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
(12.04.1955 – 08.06.2022)

Կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը

1955	Ծնվել է ապրիլի 12-ին Գորիս քաղաքում
1962-1972	Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցի աշակերտ
1972-1977	ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող
1977-1981	ԽՍՀՄ ԳԱ ԽՍՀՄ պատմության ինստիտուտի ասպիրանտ
1981-1985	ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող
1983	Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն
1986-2000	ԵՊՀ ԽՍՀՄ պատմության ամբիոնի ասիստենտ, այնուհետև՝ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ
1993-1995	ԵՊՀ գիտական քարտուղար
1995-2000	ԵՊՀ ուսումնական վարչության պետ
2000	Պաշտպանել է դոկտորական ատենախոսություն
2000-2006	ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր
2005	Ստացել է պրոֆեսորի կոչում
2006	Ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
2006-2019	ԵՊՀ ռեկտոր
2008-2022	ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն
2009	Պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով
2011	Արժանացել է Ղազախստանի պետական պարգևի՝ «Ղազախստանի անկախության 20-ամյակ» մեդալի
2012	Արժանացել է «Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի պատվավոր դոկտորի» կոչման

- 2014-2022** Իր հիմնադրած ԵՊՀ «Հայագիտության հարցեր» հանդեսի գլխավոր խմբագիր
- 2014** Արժանացել է «ՀՀ գիտության վաստակավոր գործչի» կոչման
- 2014** Արժանացել է Թուրքմենստանի պետական պարգևով՝ «Մահթումկուլի Ֆրազի» մեդալով
- 2016** Պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով
- 2022** Վախճանվել է հունիսի 8-ին Երևանում

АРАМ ГРАЧИКОВИЧ СИМОНЯН
Доктор исторических наук, профессор,
член корреспондент НАН РА
(12.04.1955 – 08.06.2022)

Основные даты жизни и деятельности

- 1955** Родился 12 апреля в городе Горис
- 1962-1972** Учащийся средней школы № 19 Еревана
- 1972-1977** Студент исторического факультета ЕГУ
- 1977-1981** Аспирант Института истории СССР АН СССР
- 1981-1985** Научный сотрудник Института истории АН АрмССР
- 1983** Защитил кандидатскую диссертацию
- 1986-2000** Ассистент кафедры истории СССР, затем доцент кафедры армянской истории ЕГУ
- 1993-1995** Ученый секретарь ЕГУ
- 1995-2000** Начальник отдела образования ЕГУ
- 2000** Защитил докторскую диссертацию
- 2000-2006** Проректор по учебной части ЕГУ
- 2005** Получил звание профессора
- 2006** Избран член корреспондентом НАН РА

2006-2019	Ректор ЕГУ
2008-2022	Директор Института арменоведческих исследований ЕГУ
2009	Был награжден медалью «Мовсес Хоренаци»
2011	Был удостоен награды государственной премией Казахстана – медалью «20-летие независимости Казахстана»
2012	Был удостоен звания почетного доктора Санкт-Петербургского государственного университета
2014-2022	Главный редактор основанный им журнала «Арменоведческие вопросы» ЕГУ
2014	Был удостоен звания заслуженного деятеля науки Республики Армения
2014	Был награжден Государственной наградой Туркменистана - медалью «Махтумкули Фрагги»
2016	Был награжден медалью «Вачаган Благочестивый»
2022	Скончался 8-го июня в Ереване

ARAM HRACHIK SIMONYAN

**Doctor of History, Professor, NAS RA Associate Member
(12.04.1955 – 08.06.2022)**

Life and Activity Key Dates

1955	Born on April 12 in the city of Goris
1962-1972	Student at secondary school № 19 in Yerevan
1972-1977	Student at YSU Faculty of History
1977-1981	Moscow Institute of History of USSR Academy of Sciences of USSR, postgraduate studies
1981-1985	Researcher at the Institute of History of ASSR Academy of Sciences

1983	Defended PhD thesis
1986-2000	Assistant Professor at the Chair of USSR History of YSU, later Associate Professor at the Chair of Armenian History
1993-1995	YSU Scientific Secretary
1995-2000	Head of YSU Educational Administration
2000	Defended doctoral thesis
2000-2006	Vice-Rector for Academic Affairs of YSU
2005	Received professor's degree
2006	Was elected Corresponding Member of NAS RA
2006-2019	Rector of YSU
2008-2022	Director of Institute for Armenian Studies of YSU
2009	Was awarded the "Movses Khorenatsi" medal
2011	Was awarded the State Award of Kazakhstan - the medal "20 th Anniversary of Independence of Kazakhstan"
2012	Was awarded the title of Honorary Doctor of St. Petersburg State University
2014-2022	Editor-in-chief of the journal "Issues of Armenian Studies" of YSU, founded by him
2014	Was awarded the title of Honored Worker of Science of the Republic of Armenia
2014	Was awarded the State Award of Turkmenistan - the "Magtymguly Pyragy" medal
2016	Was awarded the "Vachagan the Pious" medal
2022	Died on June 8 in Yerevan

ԱՐԱՄ ՀՐԱՉԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ
ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԷՋԵՐ

(Կենսագրական ակնարկ, քաղվածքներ հրապարակումներից)

**ՄԵԾԱՎԱՍՏԱԿ ՀԱՅԱԳԵՏ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ
(Կենսագրական ակնարկ)**

Արամ Հրաչիկի Սիմոնյանը ծնվել է Գորիս քաղաքում 1955 թ. ապրիլի 12-ին: 1962 թ. նրա ընտանիքը տեղափոխվել է Երևան: 1962-1972 թթ. նա ուսանել է թիվ 19 միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ 1972-1977 թթ., Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) պատմության ֆակուլտետում: 1977-1981 թթ. գիտական ուսումնառությունը շարունակել է Մոսկվայում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ԽՍՀՄ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտելուց հետո վերադարձել է Երևան և 1981-1985 թթ. աշխատանքի անցել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում նախ որպես կրտսեր գիտաշխատող, այնուհետև՝ գիտաշխատող: 1983 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Անդրկովկասի պրոլետարիատի թվաքանակը, կազմը և վիճակը XIX դ. վերջին-XX դ. սկզբին» թեմայով:

1986 թվականից Ա. Սիմոնյանն աշխատանքի է տեղափոխվել Երևանի պետական համալսարան, ուր մինչև 2000 թվականը եղել է ԽՍՀՄ պատմության (հետագայում՝ Հայոց պատմության) ամբիոնի ասիստենտ, այնուհետև՝ դոցենտ: Միաժամանակ 1993-1995 թթ. աշխատել է որպես ԵՊՀ գիտական քարտուղար, իսկ 1995-2000 թթ. ԵՊՀ ուսումնական վարչության պետ: 2000 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Զանգեզուրի գոյամարտը (1920 թ. մայիս-1921 թ. հուլիս)» թեմայով: 2000-2006 թթ. եղել է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, 2006 թ. մայիսին ընտրվել ռեկտոր, իսկ 2011 թ. մայիսին՝ վերընտրվել այդ պաշտոնում: 2005 թ. Ա. Հ. Սիմոնյանն ստացել է պրոֆեսորի կոչում, 2006 թ. ընտրվել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ: 2008 թ. հուլիսի 10-ից պատմագետը նաև ԵՊՀ-ում իր հիմնադրած Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրենն էր: Նշենք նաև, որ 1998 թ. նա անդամակցել է Հայաստանի հանրապետական կուսակցությանը:

Ա. Չ. Միմոնյանը հեղինակ է 100-ից ավելի գիտական աշխատանքների, որոնցից հինգը մենագրություններ են: Նրա գիտական հետազոտությունները վերաբերում են հայ ժողովրդի՝ XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի պատմության հիմնահարցերին, մասնավորապես պատմական վիճակագրությանը, արդյունաբերական կապիտալի, ինչպես նաև Արցախի և 1917-1921 թթ. պատմության խնդիրներին: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 10 թեկնածուական ատենախոսություն:

Իր գիտական աշխատանքներում Ա. Միմոնյանն անդրադարձել է Արևելյան Հայաստանի տնտեսական պատմությանը: 1988 թ. տպագրված «Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն» գրքում (համահեղինակներ՝ Ա. Ա. Համբարյան, Դ. Ա. Մուրադյան), օգտագործելով ԽՍՀՄ տարբեր քաղաքների (Երևան, Մոսկվա, Թբիլիսի) արխիվային հարուստ նյութեր, Ա. Միմոնյանը պատմագիտական գրականության քննական վերլուծությամբ լուսաբանել է Արևելյան Հայաստանի տնտեսության զարգացումը, որն ընթանում էր տնայնագործական արտադրության արդյունաբերականացմամբ ու ապրանքայնացմամբ: Ըստ նրա՝ նշված գործոնների հետևանքով էապես փոփոխության են ենթարկվել ներքին շուկայի բնույթն ու ծավալները, ստեղծվել են արդյունաբերական նոր ձեռնարկություններ, և նորովի տեղաբաշխվել են հները: Ա. Միմոնյանը ցույց է տվել արևելահայ պրոլետարիատի ձևավորման և տեղաբաշխման ընդհանուր պատկերը, ներկայացրել XIX-XX դդ. Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքը, ինչպես նաև պրոլետարիատի տեղն ու դերը:

1995 թ. «Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX–начале XX вв. (историко-статистический анализ)» («Անդրկովկասի բանվորները համառուսաստանյան վարձու աշխատաշուկայում XIX դ. վերջին-XX դ. սկզբին (պատմավիճակագրական վերլուծություն)») մենագրությամբ Ա. Չ. Միմոնյանը (նաև Ա. Ա. Համբարյանը) Հայաստանում սկզբնավորել է պատմագիտության մեջ հետազոտության մաթեմատիկական մեթոդի կիրառումը: Պատմաբանը պատմավիճակագրական վերլուծության է ենթարկել Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում բնակչության տեղա-

բաշխումը, շարժը, դասային ու դասակարգային կառուցվածքը, կրթական մակարդակը, զբաղվածությունը, ինքնագործ ու վարձու աշխատողների թվաքանակը, արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, դասերից ու դասակարգերից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը, ըստ այդմ՝ ներկայացրել համառուսաստանյան շուկայում Անդրկովկասի, մասնավորապես Արևելյան Հայաստանի բանվորների տեղն ու դերը:

ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ Հայաստանի պատմաբանների համար հրատապ խնդիր էր դարձել նախկինում արգելափակված թեմաների ուսումնասիրությունը: Ըստ այդմ՝ կարևոր էր նորագույն պատմության ամենաբախտորոշ ժամանակահատվածում, այն է՝ 1917-1921 թթ. տեղի ունեցած իրադարձությունների, հատկապես հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի պատմության գիտական անկողմնակալ ու անաչառ լուսաբանումը:

Գիտական գործունեության երկրորդ փուլում Ա. Միմոնյանն առաջիններից է ձեռնամուխ եղել նշված թեմայի ուսումնասիրությանը: 2000 թ. նա գիտական հանրության դատին է ներկայացրել «Զանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.)» ծավալուն մենագրությունը, որն արժանացել է մասնագետների բարձր գնահատականին: Արխիվային հարուստ փաստաթղթերի, ուսումնասիրվող ժամանակաշրջանի պարբերական մամուլի հրապարակումների, պատմական իրադարձությունների մասնակիցների հուշերի և ինքնակենսագրականների, ինչպես նաև առկա գիտական գրականության մանրագնին հետազոտության ու անաչառ վերլուծության հիման վրա նա քայլ առ քայլ հետևել է Զանգեզուրի հերոսամարտի արագափոխ ընթացքին: Պատմաբանն այն բաժանել է չորս տարբեր փուլերի՝ հիմք ընդունելով դրանցից յուրաքանչյուրի ժամանակ երկրամասի առջև ծառայած հիմնախնդիրները, դրանց լուծման համար ձեռնարկված միջոցառումներն ու ձեռք բերված արդյունքները: Առաջին փուլը, որն ընդգրկում է 1920 թ. հուլիսի 5-ից մինչև հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածը, սկսվում է կարմիր բանակի կողմից Զանգեզուրի գրավմամբ և ավարտվում հակաբոլշևիկյան ապստամբությամբ, երկրորդ փուլը՝ նույն թվականի հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի վերջը՝ նշանավորվելով Զանգե-

գուրի գինյալների պայքարի միջոցով գավառից ադրբեջանա-խորհրդային զորքերի դուրսնղմամբ: Երրորդ փուլում՝ 1920 թ. դեկտեմբերից 1921 թ. մարտն ընկած ժամանակահատվածում, երկրամասի ղեկավարությունն ու բնակչությունը հիմնականում զբաղվում էին պատերազմի հետևանքով աղետալի վնասներ կրած ներքին կյանքի կարգավորման և պաշտպանության ամրապնդման խնդիրներով: Չորրորդ փուլը, որն ընդգրկում է 1921 թ. մարտից մինչև նույն թվականի հուլիսի 12-ը, առանձնանում էր այն իրողությամբ, որ փետրվարյան հակախորհրդային ապստամբության պարտության հետևանքով Երևանից և Արարատյան դաշտավայրից հազարավոր վտարանդիներ եկել էին Ջանգեզուր և այնտեղ առաջացնելով հուսալքության, խուճապի ու պարտվողականության տրամադրություններ՝ ավելի էին վատթարացրել գավառում տիրող ծանր իրավիճակը: Ահա հենց այս պայմաններում է ավարտվել Ջանգեզուրի գոյամարտը, քանզի հուլիսի 12-ին Ջանգեզուրը անվերապահորեն հռչակվեց Խորհրդային Հայաստանի անբաժան մաս: Այս տարածքում երկրորդ անգամ հաստատվեց խորհրդային կարգը, որն ունեցել է անհամեմատ ավելի երկարատև գոյություն:

Ա. Միմոնյանի մյուս կարևոր գիտական աշխատությունը «Ջանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.» մենագրության 2017 թ. լրամշակված վերահրատարակությունն է՝ «Ջանգեզուրի գոյապայքարը 1917-1920 թթ.» վերնագրով: Հեղինակը նախ ներկայացնում է երկրամասի ամբողջական պատմությունը՝ Ջանգեզուրում և Նախիջևանում թուրք-թաթարական նվաճողների դեմ զորավար Անդրանիկի ղեկավարությամբ մղված կռիվները, այնուհետև՝ նրան փոխարինած Գարեգին Նժդեհի գլխավորած պայքարը մինչև 1920 թ. համագանգեզուրյան առաջին համագումարը՝ զուգահեռաբար անդրադառնալով նաև նույն ժամանակահատվածում Արցախում ընթացող համանման իրադարձություններին:

Ա. Միմոնյանը վերլուծաբար մեկնաբանում է Արցախ ներխուժումից Անդրանիկի հրաժարվելու փաստը, լուսաբանում Արցախն Ադրբեջանին բռնակցելու գործում Կովկասյան բյուրոյի դրսևորած բացահայտ կամայականությունը և այդ որոշման ահավոր ծանր ազդեցությունը երկրամասի բնակչության հետագա ճակատագրի վրա,

ինչպես նաև հանուն ազատության ու անկախության արցախահայության մղած պայքարը, որը XX դարի վերջին պսակվեց հաջողությամբ: Միննույն հիմնախնդիրները ժամանակագրական փոքրինչ լայն կտրվածքով նա լուսաբանել է նաև նույն թվականին հրատարակած «Ձանգեգուրի գոյամարտը 1917-1921 թթ.» մենագրությունում:

Արցախը, արցախյան հիմնահարցն ու արցախահայությունը միշտ գտնվել են Ա. Միմոնյանի ուշադրության կենտրոնում: Այդ մասին են վկայում հետագայում նրա բազմաթիվ այցելություններն Արցախ, տեղի համալսարանի հետ տարբեր ձևաչափերով սերտ համագործակցությունը, Ստեփանակերտում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովի (2006 թ. հունիսի 21-24) նախաձեռնումն ու անցկացումը, Արցախի տարբեր հատվածներում ավանդական դարձած ծառատունկի կազմակերպումը:

Ա. Միմոնյանի՝ Արցախին և արցախահայությանը սատարելու դիրքորոշումը դրսևորվել է նաև Արցախյան քառօրյա և 44-օրյա պատերազմների ընթացքում: Մինչ այդ նա իր գործընկերներ Ա. Ղարիբյանի և Է. Բաբայանի հետ 2011 թ. հրատարակել է «Արцах-Карабах. Библиография на русском языке (1988-2010 гг.)» («Արցախ-Ղարաբաղ: Ռուսալեզու մատենագիտություն (1988-2010 թթ.)») ժողովածուն:

Մեծ է Ա. Միմոնյանի վաստակը ոչ միայն հայոց պատմության գիտական ուսումնասիրության ու լուսաբանման, այլև ձեռք բերված արդյունքների հանրայնացման ասպարեզում: Այդ ամենը նա արել է թե՛ բազմամյա դասախոսական գործունեությամբ, թե՛ հանրապետական և միջազգային ամենատարբեր գիտաժողովներում (Երևան, Մոսկվա, Նյու Յորք, Լոնդոն, Բեռլին, Մադրիդ, Բրյուսել, Հռոմ, Փարիզ, Թեհրան և այլուր) հանդես եկած հետաքրքիր զեկուցումներով և թե՛ գործուն մասնակցությամբ դպրոցական ու բուհական դասագրքերի, ինչպես նաև ուսումնական ձեռնարկների պատրաստման գործընթացին:

Արարողակարգային ընդունելությունների ժամանակ Ա. Միմոնյանի ցուցաբերած գիտելիքներն ու հմտությունները լավագույն

տպավորություն են թողել օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների վրա՝ մեծ համբավ բերելով մեր երկրին ու ԵՊՀ-ին: Ա. Միմոնյանի հյուրերի թվում եղել են Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը, Հունաստանի նախագահ Կարլոս Պապուլիասը, Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը, Ուրուգվայի Արևելյան Հանրապետության ներկայացուցիչների պալատի նախագահը, ռուս տիեզերագնաց Ալեքսանդր Բալանդինը և այլք:

2006 թ. ԵՊՀ ռեկտոր ընտրվելուց հետո, Ա. Միմոնյանն անմիջապես ձեռնամուխ է եղել մայր բուհում ուսումնական գործընթացի կազմակերպման բարեփոխմանը. 2007 թ. մագիստրատուրայում, 2008 թ. բակալավրիատում, իսկ 2010 թ. ասպիրանտուրայում ներդրվել է կրեդիտային համակարգ: Սկսած 2007 թվականից՝ համալսարանը ուսանողներին է տրամադրել տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը, իսկ 2010 թ. բոլոր շրջանավարտներին՝ եվրոպական նուշի դիպլոմի հայերեն ու անգլերեն հավելվածները: Ավելին, կրթական ծրագրերն արդիականացնելու, եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու և աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարելու նպատակով բակալավրիատում ու մագիստրատուրայում բացվել են մի շարք նոր մասնագիտություններ:

2008 թ. համալսարանի կառավարման համակարգում նա ներդրել է ռազմավարական պլանավորման գործընթացը և 2010-2014 թթ. իրականացրել զարգացման առաջին ռազմավարական ծրագիրը: ԵՊՀ ներքին ապահովման համակարգ ստեղծելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ (որակի ապահովման կենտրոնի, գիտական խորհրդի և ֆակուլտետների գիտական խորհուրդների որակի ապահովման մշտական հանձնաժողովների ստեղծում և այլն) 2012 թ. համալսարանը ներգրավվել է ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման գործընթացում, իսկ 2015 թ. փետրվարին Հայաստանի Հանրապետության բուհերից առաջինն ու միակն է արժանացել ինստիտուցիոնալ պետական հավատարմագրման՝ վեցամյա ժամկետով: Հարկ է նշել, որ տվյալ

գործընթացին մասնակցում էին եվրոպական փորձագետներն ու Նիդերլանդների հավատարմագրման գործակալությունը:

Մեծ էին Ա. Միմոնյանի՝ ԵՊՀ-ն ժամանակակից հետազոտական համալսարան դարձնելու աշխատանքները: Նրա ղեկավարման տարիներին ԵՊՀ-ում գիտակրթական զարգացմանը զուգահեռ բացվել են մի շարք նոր ստորաբաժանումներ՝ Չինագիտության կենտրոնը, Հայ-հնդկական կենտրոն-ամբիոնը, Ռուսական կենտրոնը: Կրթության բարձր որակի ապահովմանը զուգահեռ նրա ուշադրության առանցքում էր նաև ուսանողների և աշխատակազմի կենսագործունեության համար բարվոք պայմանների ապահովումը: Նրա ղեկավարության օրոք ԵՊՀ բազմաթիվ մասնաշենքերի վերանորոգմանը զուգահեռ ստեղծվել են նաև ժամանակակից սպորտհամալիրը, հյուրատունը, հանրակացարանը:

Ա. Միմոնյանի ռեկտորության տարիներին էական փոփոխություններ են տեղի ունեցել նաև համալսարանի գիտական կյանքում: Մայր բուհը ոչ միայն դարձել է գիտակրթական առաջնակարգ հաստատություն, այլև հայագիտական կադրերի պատրաստման ու գիտական հետազոտությունների իրականացման առաջատար կազմակերպություն: Հենց նրա նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ են ստեղծվել Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, վերջինիս գիտական օրգան «Հայագիտության հարցեր» քառամսյա հանդեսը, Սփյուռքագիտության ամբիոնը, մագիստրոսական կրթության շրջանակում ընդգրկվել են հայագիտական ու ցեղասպանագիտական ծրագրեր, կյանքի են կոչվել մի շարք գիտական նոր կենտրոններ ու ստորաբաժանումներ:

Ա. Միմոնյանի ջանքերով Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ ԵՊՀ գրադարանի մուտքի մոտ՝ Չարենցի փողոցի կողմից, հիմնադրվել է Երախտիքի ծառուղին, որի աջ ու ձախ կողմերում տեղադրվել են XX դարասկզբի մեծագույն ողբերգության՝ Հայոց ցեղասպանության կազմակերպումն ու իրականացումը հասարակական լայն շրջանակներում քննադատած, բողոք ու կարեկցանք հայտնած, ինչպես նաև հայության մի սովոր գանգվածին մահվան ճիրաններից փրկած և օգնություն ցուցաբերած օտարազգի հայտնի գործիչների՝ Անատոլ Ֆրանսի, Պիեռ Քիյարի, Յոհաննես

Լեփսիուսի, Արմին Վեզնեթի, Հենրի Մորգենթաուի, Ջեյմս Բրայսի, Ֆրանց Վերֆելի, Յակոբ Կյունցլերի, Կարեն Եպպեի, Ֆրիտյոֆ Նանսենի, Ալմա Յոհանսոնի, Ռաֆայել Լեմկինի կիսանդրիները:

Ա. Միմոնյանը նաև պատվարժան քաղաքացի էր: Ունենալով հայ մարդուն բնորոշ առաքինություններ՝ նա իր ամբողջ կյանքի ընթացքում շրջապատի նկատմամբ դրսևորել է նրբանկատ ու հոգատար վերաբերմունք: Նրա բնավորությանն առանցքային էին հասարակությանը պիտանի լինելու, կենսագործունեության ներդաշնակությունն ձևավորելու յուրահատկությունները: Միաժամանակ առանձնանում էր նաև նրա՝ յուրաքանչյուր անհատի նկատմամբ ներողամիտ ու սրտացավ վերաբերմունքը:

Իր բազմաբեղուն գործունեության ընթացքում Ա. Միմոնյանն արժանացել է «Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի», «Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի պատվավոր դոկտորի» կոչումների, «Մովսես Խորենացի», «Վաչագան Բարեպաշտ», «Ղազախստանի անկախության 20-ամյակ» և Թուրքմենստանի «Մահթումկուլի Ֆրագի» մեդալների:

Ա. Միմոնյանը հայ մեծանուն պատմաբան, հասարակական-քաղաքական գործիչ, ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանի (1928-2016) որդին էր, ամուսնացած էր, ուներ երկու դուստր:

Արամ Միմոնյանը մահացել է Երևանում 2022 թ. հունիսի 8-ին՝ 67 տարեկան հասակում:

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությամբ
(«Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.»)
[Գրախոսություն]

Եղան ժամանակներ, երբ Նժդեհի նման անհատները հայոց պատմության դասագրքերի լուսանցքներում անգամ տեղ չունեին: Այժմ, բարեբախտաբար, պատմության մեջ ճակատագրական դեր ունեցած հերոսները վերադարձվում են ժողովրդին: Վերջին տասնամյակում հայ պատմագրության մեջ հաճախ է անդրադարձ կատարվում Նժդեհի կերպարին: Սակայն իսկական կոթողային մենագրություն է լույս տեսել վերջերս՝ «Զանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.)» խորհրդանշական խորագրով: Հեղինակն է պատմագիտության դոկտոր Արամ Սիմոնյանը: Աշխատանքը հեղինակի երկար տարիների գիտական պրպտումների հանրագումարն է: Այն տպագրվել է ԵՊՀ և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ ինչպես 1920-1921 թթ., այնպես էլ արդի ժամանակաշրջանում, Անդրկովկասը նման է եռացող կաթասայի՝ իր մեջ ներառելով վիճահարույց ազգամիջյան հակասությունների կծիկը: Զանգեզուրյան 1920-1921 թթ. գոյամարտը հաջորդել էր ցարիզմի և ժամանակավոր կառավարության տապալմանը և բոլշևիզմի հաղթանակին: Մեր օրերում ևս Զանգեզուր-Արցախ երկրամասի հայության պայքարը ադրբեջանական զավթիչների դեմ հաջորդեց ԽՍՀՄ թուլացմանը և փլուզմանը:

Ուրեմն պատմությունը նորից կրկնվում է: Ա. Միմոնյանի աշխատությունը գրվել է հենց պատմական դասերը մեծապես հաշվի առնելու նպատակադրումով: Հեղինակը գրականության, մամուլի և մեծաթիվ արխիվային փաստաթղթերի ու այլ նյութերի օգնությամբ նորովի թարմ հարցադրումներով բացահայտել է Ջանգեզուրում ազգային հարցի բարդությունը, Ջանգեզուրը Ադրբեջանի կազմում մտցնելու՝ խորհրդային իշխանությունների շահագրգռվածության դրդապատճառները, Հայաստանի կառավարության դիվանագիտական և այլ կարգի ջանքերը գավառը պաշտպանելու համար:

Հատուկ ուշադրությամբ, մանրամասն լուսաբանված են լեռնաշխարհի ներքին կացությունը, դրա շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը, 11-րդ կարմիր բանակի գործառնների՝ հայկական գավառ ներխուժելու, դրանց դեմ մղված կռիվների, 1920 թ. վերջերին բոլշևիկյան ուժերին գավառի սահմաններից դուրս մղելու դրամատիկ, հուզախոռով պատմությունը: Հեղինակն անդրադարձել է ՀՀ կառավարության և Ջանգեզուրի իշխանությունների հաճախ ոչ հարթ հարաբերությունների վերլուծությանը, խորհրդային կարգերի հաստատումից հետո Երևանի կենտրոնական և Գորիսի իշխանությունների ջանքերին՝ Ջանգեզուրը Խորհրդային Հայաստանին խաղաղ ճանապարհով միավորելու ուղղությամբ (այս առումով ուսանելի է հատկապես Ալ. Մյասնիկյանի վիթխարի դերը):

Եզրափակիչ՝ 4-րդ գլխում արխիվային նորահայտ փաստաթղթերի ընդգրկմամբ ներկայացված են Լեռնահայաստանի գոյամարտի վերջին փուլի ռդիսականը, Ջանգեզուրից Պարսկաստան գաղթած հայ զանգվածների և մտավորականության տառապանքները, Ալ. Մյասնիկյանի գլխավորած կառավարության ջանքերը՝ վերջիններիս հայրենիք վերադարձնելու ուղղությամբ:

Պետք է ընդգծել, որ հեղինակը հատուկ ուշադրություն է հատկացրել Ջանգեզուրի իշխանությունների և հարևան Իրանի փոխհարաբերությունների, տնտեսական ու ռազմական կապերի լուսաբանմանը՝ ընդամին արժևորելով այն գաղափարը, որ Լեռնահայաստանը հայաթափելու դեպքում Հայաստանը կտրվելու էր հայ ժողովրդի

հանդեպ համակրանք տաձող Պարսկաստանից և պարփակվելու էր թշնամական շրջապատման մեջ:

Աշխատության գլխավոր առանցքը, անշուշտ, 20-րդ դարի հայ ազգային մեծագույն գործիչ Գարեգին Նժդեհի կյանքն ու գործունեությունն է՝ իր կերպարին բնորոշ գծերով, խոհերով, գրվածքներով և ասույթներով: Մեծ հայի գրեթե բոլոր գրվածքներն օգտագործվել են սույն աշխատության մեջ՝ բացի մեկից («Դաշնակցության պանթեոնը»), որը ցարդ չի գտնվել Հայաստանի գրապահոցներում: 1920-1930-ական թվականներին Նժդեհը սփյուռքահայությանը դիմեց հայրենասիրական-դաստիարակչական ուղղվածությամբ բազմաթիվ հոդվածներով, կոչերով և հորդորներով, որոնք, ըստ աշխատության հեղինակի, թեև անմիջականորեն չէին առնչվում Սյունյաց հերոսամարտի պատմությանը, սակայն սնունդ են առել լեռնաշխարհում թշնամու դեմ աննահանջ մարտնչող այդ հերոսական սերնդի տառապանքներից, աննկուն կամքից ու մաքառումներից:

Ընթերցողի դատին նեկայացվող սույն աշխատությունն ունի գիտաճանաչողական և արդիական մեծ նշանակություն: Այն ուշագրավ և սթափ ահագանգ է Հայաստանի Հանրապետության ներկա կառավարողներին, դիվանագետներին, զինվորականներին, ողջ հայ մտավորականությանը՝ անցյալի դառը սխալներն ու վրիպումները նորից չկրկնելու հորդորումով ու հանձնարարականով:

Արմեն Կարապետյան

«Ժամանակ», 2001, 30 հունիսի, էջ 5

Գալիքի հուսալի թիկունք

(«Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.» գրքի մասին)

[Հատվածներ]

...Ստանձնելով լեռնահայաստանյան թեման հիմնովին վերանայելու պարտքն ու մեծագույն պատասխանատվությունը՝ պատմագիտության դոկտոր Արամ Միմոնյանն ընթերցողի սեղանին դրեց

«Ձանգեգուրի գոյամարտը» ստվարածավալ մատենագրությունը: Դա, հիրավի, երևելի երկունք է ոչ միայն գիտական ու հետազոտական առումով, այլ նաև որպես մեր ժամանակներում տառապանքներով իրականացված հրատարակություն: Հաջողության գլխավոր երաշխիքներից մեկն էլ պատմության դաշտի ու կերպարների նկարագրությունն է՝ առանց կուսակցական նախապաշարումների....:

....Ինչպես որ հիմա, ութ տասնամյակ առաջ էլ Անդրկովկասը հիշեցնում էր եռացող կաթաս: Կայանում էին զարհուրելի իրադարձություններ, որոնց հրահրողներն ու մարտավարողները դարձյալ մեծ տերություններն էին: Ինչպես որ հիմա, Ադրբեջանի թիկունքում հայոց հեղված արյան ծովից չոր դուրս եկած Թուրքիան էր, իսկ կողքին՝ Հոկտեմբերյան հեղափոխության դրոշն ամենուր ծածանելու հանած Ռուսաստանը, որի այժմյան իրավահաջորդը դրսևորում է երկդիմի մոտեցումներ, զբաղեցնում հաշտեցնողի դիրք: Դարձյալ խաղաքարտ դարձված Մեդրիի ճակատագիրը, այն պարանոցի, որը կկտրվեր, եթե միասնության չհասնեին անվեհեր զորապետ Նժդեհն ու խորհմաց քաղաքական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը...: Նույն խնդիրները, նույն թատերգությունը, սակայն տարբեր ժամանակներում ու տարբեր դերակատարներով: Եվ անցյալի ուսանելի դաս, որ ժողովուրդների փոխհարաբերություններում չկան «չեզոք գոտիներ», որ խորացող հակասություններն ու կնճռոտ բոլոր հարցերը սերտորեն առնչվում են միջազգային կյանքին, որն իր շահագրգռությունները մարտնչող կողմերին ներարկում է խոր ընդհատակից՝ մշտապես ընդունելով խաղաղարարի կեցվածք...:

....Լեռնահայաստանի պատերազմը, որն անվանված է նաև գոյամարտ, փրկամարտ, ազատամարտ ու հերոսամարտ, վերահաստատում է այն միտքը, որ դիվանագիտական բարդությունները մշտապես գերազանցում են պատերազմականին...:

....«Ձանգեգուրի գոյամարտը» գրքով անցյալի սպիտակ շատ էջեր են լրացվել. մայր պատմության արժանի պատվանդան է բարձրացվել ժողովրդական զանգվածների խիզախության և նպատակամետ հերոսականության մղող, անզուգական անհատականության, անդրդվելի կամք և վճռականության մարմնավորող զորապետ

Գ. Նժդեհը: Նրա կերպարի վեհությունը լիակատարությամբ պատկերացնելուն կարող է նպաստել Արամ Միմոնյանի նկարագրած պատմական կենսոլորտը, քանզի նրա գրքի ընթերցումից հետո ինքնաբերաբար է թելադրվում հանուն հայ ազգի Գարեգին Նժդեհի հետագա պայքարին, նրա կյանքի շարունակվող ողիսականին իրազեկ լինելու անհրաժեշտությունը, հաղորդակցվելը նյութական վարքաբանության կանոնարկմանը միտված նժդեհական պատգամներին, փիլիսոփայական ըմբռնումներին, մտքի հերկերին, որոնց շնորհիվ մեզանում սկսել է ծավալվել հայ խառնվածքի նժդեհականությունը: Բարեբախտաբար կա մարտից ազատ ժամերին, Խոր Միբիբի մութ ու ցուրտ զնդաններում Լուսավորչի նման չարչարանաց ենթարկված, ցեղակրոնության իր հավատին հավատարիմ Մեծ Հայորդու խտածո ԳԻՐՔ-ԳՐՈՅԸ...

Այսպես է, այո՛, որ անցյալն ու նրա մեծ գործերը դառնում են «գալիքի հուսալի թիկունք»:

Ժաննա Միլիթարյան

«Կրթությունը և գիտությունը Արցախում»,
2004, № 5-6, էջ 250-254

Համալսարանականը՝ Արամ Միմոնյան [Հատվածներ]

Պրոֆեսոր, ԵՊՀ նախկին ռեկտոր, լուսահոգի Արամ Միմոնյանի հետ պատիվ եմ ունեցել շփվել իմ համալսարանական կյանքի տարբեր փուլերում: Նրա գիտական վաստակի, մանկավարժական և վարչական գործունեության մասին գրվել է և դեռ կգրվի...:

Ինչպես իր կենդանության օրոք, այնպես էլ հիմա, վստահորեն պնդում եմ նաև սերունդների համար, Արամ Միմոնյանը մեծ դեր ունի հայկական արևելագիտության զարգացման գործում. չի եղել որևէ հարց, առաջարկ, որը կապված էր թյուրքագիտության, իրանագիտության կամ արաբագիտության զարգացման հետ, որը աջակ-

ցություն չստանար նրա կողմից: Մեր աշխատանքային համագործակցությունը, գրույցները, քննարկումները՝ գիտության զարգացման, սերունդների կրթության տեսլականի հետ կապված, խարսխված էին ազգային և պետական շահերի գիտակցման ու պատկերացումների վրա....:

.....Արամ Սիմոնյանը հանկարծակի հայտարարեց իր հրաժարականի մասին: Կրկին հիշողությանս մեջ մնացել է ԵՊՀ գիտական խորհրդի այդ նիստը, երբ Սիմոնյանը ասաց. «Ինչ ունի սկիզբ, այն ունի և վերջ», և հայտարարելով ռեկտորի պաշտոնից հրաժարվելու իր մտադրության մասին, հեռացավ դահլիճից: Դահլիճը լուռ էր, կիսաշոկային վիճակում համալսարանականների մի մասը չհասցրեց, մի մասը չուզեց, մի մասն էլ զգուշացավ շնորհակալություն ասել ԵՊՀ-ն երկար տարիներ ղեկավարած անձին: Հիմա էլ կարծում եմ, որ ԵՊՀ-ն Արամ Սիմոնյանին մի պարզ, մարդկային շնորհակալություն է պարտք, որը ցավալիորեն չհասցրեց տալ նրա կենդանության օրոք, իսկ հիմա արդեն ուշ է: Այդ շնորհակալության կարիքը Սիմոնյանը չուներ, համալսարանն ուներ

.....Սիմոնյանն այլևս ռեկտոր չէր, ղեկավարում էր ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, ուներ իր նախկին աշխատասենյակից տասը անգամ փոքր մի սենյակ և սիրով զբաղվում էր գիտությամբ: Նրան արդեն քչերն էին այցելում, իր նախկին «ընկերների», գործընկերների մի մեծ մասը խուսափում էր իր հետ շփվելուց, ինքն այդ մասին գիտեր և խոսում էր, իմ բնութագրմամբ, «Բարձրաշխարհիկ արհամարհանքով», բայց միևնույն ժամանակ կրկին քրիստոնեաբար ներում էր նրանց: Ես հաճախ էի այցելում նրան, աշխատասեղանին գրքեր էին, արխիվային փաստաթղթեր, և նա, ընկղմված դրանց մեջ, կարդում էր, գրում հոդվածներ, գրքեր: Գիտնականի համար երանելի վիճակում էր կարծես, էթե միայն երկիրը չլիներ աղետալի վիճակում: Մեր ամեն հանդիպում ուղեկցվում և ավարտվում էր Հայաստանի այս աղետալի վիճակի մասին մտահոգությունների, մտավորականության մի մեծ մասի հարմարվողական, արգահատելի պահվածքի մասին գրույցներով: Վերջին հիշողությունս կապված է նրա ծննդյան օրվա հետ. 2022 թ. ապրիլի 12-ին

Արամ Միմոնյանի ծննդյան օրն էր, գնացի նրա աշխատասենյակ, մտովի հիշում էի ռեկտորական տարիների այդ օրը, երբ նրա աշխատասենյակում, ընդունարանում և հարակից միջանցքում հերթեր էին ռեկտոր Միմոնյանին շնորհավորելու շտապող մարդկանցից բաղկացած: Այս անգամ նրա փոքրիկ աշխատասենյակում ընդամենը հինգ անձ էր, նրա իրոք հավատարիմ և անբաժան ընկերները...:

...Միմոնյանի անժամանակ կորստով ԵՊՀ-ն զրկվեց իր յուրահատկությունը, իր սուլիդությունը, իր այլ լինելը պայմանավորող կարևոր կերպարներից և գույներից մեկից: Ինչպես հայտնի երգում է ասվում. «Երևանը տուն ու շենք չի, Երևանը մենք ենք», նույնը կարելի է ասել ԵՊՀ-ի մասին. համալսարանը աշխատասենյակ և պաշտոն չէ, համալսարանը մարդիկ են, կերպարներն են, այսինքն՝ իրական համալսարանականները: Արամ Միմոնյանը ահա այդպիսի դասական համալսարանական էր, ում հեռացումը գուժում է Երևանի պետական համալսարանի մի յուրահատուկ և տարբերվող էպիսոպի ավարտ...:

Ռուբեն Մելքոնյան
«Հրապարակ», 2022, հունիսի 9

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Զանգեզուրի գոյամարտի հանրագումարը և դասերը

[Հատված]

....Զանգեզուրյան հերոսամարտի դասերը խիստ կարևոր են նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության համար: Այդ դասերը հուշում են հետևյալը:

1. Հարևան աղբբեջանական պետությանը առնչվելիս հայկական դիվանագիտությունը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ այդ երկիրը, ինչ քաղաքական կարգեր էլ իշխեն այնտեղ՝ սոցիալիստական, թե կապիտալիստական, ազատական, թե բռնապետական, միննույն է, առաջին հերթին Զանգեզուրի, ինչպես և Հայաստանի այլ տարածքների նկատմամբ հանդես է գալու տարածքային հավակնություններով և ագրեսիվ նկրտումներով:

2. Թուրքիան, ելնելով թուրք ժողովրդի ցեղային հատկանիշներից, Անդրկովկասում միշտ լինելու է Աղբբեջանի կողքին՝ ընդդեմ Հայաստանի: Ուստի զուր են լինելու դարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով Թուրքիային չեզոքության դիրքեր մղելու հայկական կողմի բոլոր ջանքերը: Թուրքիայի հետ Հայաստանի նորմալ հարաբերությունների ստեղծումը պայմանավորված է այնպիսի բարդ խնդիրների նկատմամբ թուրքական կողմի վերաբերմունքով, ինչպիսիք են հայկական ցեղասպանությունը և Հայ Դատը: Իսկ դրանք, որ անբաժան են հայոց պատմությունից և մարդկային պարզ բարոյականությունից, վաղ թե ուշ Հայաստանի իշխանությունների կողմից որդեգրվելու են որպես արտաքին քաղաքականության բաղադրիչներ, որոնք անընդունելի են մնում թուրքերի համար:

3. Իրանի հետ Հայաստանի հարաբերություններն առաջնային են: Պարսիկ և հայ ժողովուրդները միմյանց հետ կապված են հազարամյակների պատմությամբ, մշակութային նմանություններով: Այդ

իրողությունները նպաստավոր հող են ստեղծում երկու ժողովուրդների միջև ամենասերտ հարաբերությունների ստեղծման համար: Հայ-պարսկական հետագա մերձեցման գործընթացին, անշուշտ, կարող է նպաստել զանգեզուրյան գոյամարտի օրերին Սյունիքի պաշտպանների և պարսկական իշխանությունների միջև ստեղծված ջերմ հարաբերությունների ու փոխադարձ աջակցության պատմության լայն լուսաբանումը:

4. 1918-1921 թթ. իրադարձություններն Անդրկովկասում մեկ անգամ ևս փորձաքար եղան հայ-վրացական հարաբերությունների համար: Պարզ դարձավ, որ անկասկած է Հայաստանի համեմատությամբ Ադրբեջանի հետ Վրաստանի հարաբերությունների գերակայությունը: Հայաստանի համար ծանր օրերին Վրաստանը կարող է չեզոք մնալ, չմասնակցել նրա դեմ ուղղված ագրեսիվ գործողություններին, բայց նաև երբեք բացահայտ աջակից չլինել նրա ազգային ձգտումներին: Վրաց-հայկական հարաբերությունները միշտ կմնան երկու ժողովուրդների դարավոր եղբայրության մասին հավաստիացումների ու խոստումների, բայց իրականում առավելագույնը՝ բարիդրացիական հարաբերությունների շրջանակում:

5. Չանգեզուրի 1920-1921 թթ. կռիվներում ագրեսիվ կողմը ռուս-բոլշևիկյանն էր: Չանգեզուրցին պաշտպանում էր իր երկիրը, խորհրդային բանակը ձգտում էր գրավել լեռնաշխարհը և այն հանձնել Ադրբեջանին, մի բան, որը բարեբախտաբար չհաջողվեց: Բայց Հայաստանի արդի ժամանակաշրջանի և ապագայի շահերը շատ կողմերով միահյուսված են Ռուսաստանի շահերին, ավելին. Ռուսաստանը եղել և մնում է Հայաստանի գլխավոր ստրատեգիական դաշնակիցը: Չանգեզուրյան գոյամարտը կրկին հաստատել է այն ճշմարտությունը, որ ազգային շահերի գերակայությունը բացարձակ է բոլոր ժողովուրդների ու պետությունների համար: Այն գերակա է նաև հայ ժողովրդի և հայկական պետականության համար

«Հայկական բանակ»,
2000, № 3 (25), էջ 73-82

**Ինչո՞ւ է հայագիտությունը հայտնվել
անմխիթար վիճակում
[Հատված]**

....Մեր պատմագիտությունը պարտք է ժողովրդին. անհրաժեշտ են ոչ միայն գիտական, այլև գիտահանրամատչելի գրքեր, հետազոտություններ, որոնք դաստիարակչական հզոր նշանակություն կունենան: Այսօր մեր ունեցածի զգալի մասը չի բավարարում միջազգային չափանիշներին՝ ո՛չ տեսական, ո՛չ մեթոդական, ո՛չ փաստագրական առումով: Չափազանց նեղացվել է աղբյուրագիտական բազան, լուրջ խնդիրներ ունենք արխիվային նյութերի առումով: Այսօր ավելի քան համոզված եմ՝ Ադրբեջանի արխիվներում հայկական նյութն ամբողջովին ոչնչացված է: Վրացական աղբյուրներում թե՛ ոչնչացվում է, թե՛ յուրացվում... Ռուսաստանում ապրել, աշխատելը թանկ հաճույք է: Մեծ ծախսեր են պահանջում նաև դրանք պատճենահանել, մեր արխիվներ փոխադրելը: Առաջանում է աղբյուրների սով, որը հնարավորություն չի տալիս կատարել ամբողջական պատմագիտական հետազոտություններ

«Հայոց աշխարհ»,
2007, 24 մարտի, էջ 6

**Համալսարանի՝ իբրև համազգային
կառույցի առաքելությունը
[Հատվածներ]**

....XX դարի փիլիսոփայական միտքը մարդկության մշակութային վերջին զարգացումները մեկնաբանեց իբրև հեռացում համամարդկային արժեքներից: Դրանում մեղսագրվեց նաև կրթությունը, մասնավորապես՝ համալսարանը: XVIII դարից սկսած՝ նրա զարգացումը դիտվեց իբրև նահանջ մարդասիրական սկզբից և հրաժարում մշակութային զարգացման կողմնորոշիչ լինելուց: Համարվեց, որ XX դարում բարձրորակ կադրերի պատրաստման խնդիրը համալսարանում

րանին իրականում պարտադրել է ինստիտուտի կարգավիճակ: Այս ամենի փիլիսոփայական իմաստավորումը սկզբնավորեց նոր շարժում՝ վերադարձ դեպի դասական համալսարանական կրթություն:

Ո՞րն է համալսարանական կրթության **արդիականության գաղտնիքը**: Համալսարանի գաղափարը ներկայացվում է երեք հայեցակետերի անքակտելի միասնության մեջ՝ **գիտելիքի ստեղծում (գիտություն), գիտելիքի հաղորդում (կրթություն) և գիտելիքի տարածում (մշակույթ)**: Ներառելով ողջ գիտությունը՝ բնական և հումանիտար, միատեղելով նրա ավագ և երիտասարդ սերունդներին, պահպանելով գիտելիքի և կյանքի եռթյան կապը՝ համալսարանն ապահովում է ինչպես գիտության՝ իբրև մշակույթի բաղադրիչի առավել բնականոն զարգացումը, այնպես էլ այդ մշակույթը կրողների ձևավորումը: Այսպիսով՝ իբրև կրթությունը, գիտությունը և մշակույթը համադրող եզակի կառույց՝ համալսարանն ապահովում է ինչպես դրանց, այնպես էլ մարդկային զարգացումը:

Ժամանակակից համալսարանի գաղափարը հիմնվում է Վ. Հումբոլդտի հայեցակարգի վրա, որը հիմք է հանդիսացել Օ. Շելլերի, Օրտեգա ի Գասետի և այլոց կողմից համալսարանական կրթության սկզբունքները զարգացնելու համար: Ըստ այդ գաղափարի՝ համալսարանն էլիտար ուսումնական հաստատություն է՝ հիմնված կրթության ու գիտական հետազոտությունների միասնության վրա, և չի հետապնդում շրջանավարտների հետագա գործունեությանն ուղղված նեղ օգտապաշտական նպատակներ: Համալսարանի դարձը իր բուն կոչմանը դրսևորվում է որպես գիտելիքի և ազատության նկատմամբ ժամանակակից մարդու ձգտումների արտացոլում: Այս առումով էլ այն հոգեհարազատ է հային: Անձի համակողմանի զարգացում, համամարդկային արժեքների գերակայություն և հասարակության հումանացում. ահա այս խնդիրներն են պայմանավորում համալսարանական կրթության արդի վերափոխումը և զարգացման ընդհանուր միտումները: Հայ իրականության մեջ համալսարան կոչվող կամ կոչման հավակնող հաստատությունների թվում Երևանի պետական համալսարանը, անշուշտ, միակն էր, որ կարող էր իրագործել դասական համալսարանի գաղափարը՝ դառնալով

ազգային մշակույթի զարգացման կողմնորոշիչը: Հավաստելով հավատարմությունն իր տեսակին՝ իբրև կրթության միջազգային ձևի, համալսարանը, այնուամենայնիվ, փորձեց գնալ իր ճանապարհով: Հայեցակարգային պահանջներից գատ՝ ԵՊՀ կրթական համակարգի վերափոխումը անհրաժեշտ դարձրին նաև այլ գործոններ:

1990-ական թվականների սկզբին անկախացած Հայաստանը վերստին կանգնեց պետականության կերտման խնդրի առջև: Հանրապետությունում քաղաքական, տնտեսական և մշակութային նոր իրադրությունը միանգամայն այլ պահանջներ էր ներկայացնում կրթությանը, ինչն անհրաժեշտ էր դարձնում ոչ միայն պահպանել համալսարանի լավագույն ավանդույթները, այլև ձեռք բերել կրթության նոր որակ: Այդ նոր, ազգային համալսարանի կայացմանն էր ուղղված Հայաստանի Հանրապետության նախագահի 1992 թ. հրամանագիրը՝ ԵՊՀ-ին առանձնաշնորհելով կրթական, գիտական և մշակութային ինքնավար հաստատության կարգավիճակ: Հաջորդ քայլը համալսարանինն էր, և ԵՊՀ-ի ղեկավարությունը նախաձեռնեց նրա վերափոխումը: Մակայն համալսարանի առջև ծառայած էին ներհակ խնդիրներ. մի կողմից անխուսափելի էր դառնում միջազգային կրթական չափանիշների ընդունումը, մարդկության զարգացումը պայմանավորող արժեքների յուրացումը, մյուս կողմից՝ սեփական ավանդույթների պահպանումը և ազգային արժեքների վերագտնումը: Նշված հանգամանքները համալսարանի վերափոխումը դարձնում էին բավական բարդ, համապարփակ և բազմափուլ երևույթ:

Վերափոխման առաջին փուլը (1992-1999), որն ուղղված էր համալսարանի ինքնապահպանմանը և ինքնահաստատմանը, իրագործվում էր բարդ պայմաններում: ԵՊՀ-ի վերափոխման նախաձեռնողները իրագեկ էին, որ կրթությունն ավանդապահ ոլորտ է, նրա զարգացման միտումները յուրաքանչյուր երկրում դրսևորվում են յուրովի: Ուստի ընտրվեց եվրոպական եռաստիճան կրթական համակարգի ոչ թե դասական մոդելը, այլ նորը բխեցվեց հնից՝ կրթության կառուցվածքի հիմնական փոփոխությունը հանգեցնելով նախկին համակարգին ներհատուկ, բայց չկառուցավորված որակների

հատակեցմանը և խորացմանը: 1995/1996 ուսումնական տարվանից ԵՊՀ-ն անցավ կրթական նոր համակարգի: Կրթության երկու կարևորագույն հատկությունները՝ պահպանողականությունը և գալիքին միտվածությունը, դարձան այն երկու սյուները, որոնց վրա սկսեց բարձրանալ վերափոխվող համալսարանը՝ հիմնվելով անցյալի վրա և նայելով ապագային

.....Կրթության եռաստիճան համակարգի և կրեդիտային ուսուցման ներածումը ԵՊՀ համար նշանակում էր ամենից առաջ համալսարանական կրթության համապատասխանեցում միջազգային չափանիշներին: Վերջինիս ենթատեքստը կրթության ազգային բաց համակարգի ստեղծումն էր՝ փոխհաղորդակցվելու այլ մշակույթների ու ժողովուրդների հետ, ինչպես նաև բարենպաստ պայմաններ ապահովելու հայության տարբեր հատվածների հարաբերման համար:

Մեր հայրենակիցները կրթական մակարդակով խիստ անհավասար են, ինչը սերունդների, համայնքների, ինչպես նաև հայության երկու հատվածների օտարացման պատճառ է: Միջազգային լավագույն փորձի յուրացումը համաչափելի կդարձնի մեր գիտելիքները, ապա և կյանքը: Ըստ այդմ, համալսարանի հաղորդակցությունն ընդլայնվում է երկու ուղղությամբ՝ ներազգային ու միջազգային. ընդ որում, փորձ է արվում երկրորդը նպաստավոր դարձնել առաջինի համար

.....Վերափոխումը ձեռնարկելով կրթության իրավական դաշտի բացակայության պայմաններում՝ ԵՊՀ-ն հանձնառեց գործել այնպես, որ համալսարանական կրթության հիմնադրույթները հող նախապատրաստելի բարձրագույն կրթության զարգացման համար առհասարակ: Դրանով սկսվեց ԵՊՀ նպատակային, հետևողական ներդրումը թե՛ «Կրթության մասին» ՀՀ օրենքի մշակման և թե՛ կրթական քաղաքականության ձևավորման մեջ: Այս ուղղությամբ մյուս ձեռքբերումը ազգային արժեքներին հավատարմության հավաստումն էր օրենքում, այդ թվում և ԵՊՀ-ի դերի կարևորումը (հոդված 28)

....Համալսարանական կրթության անհրաժեշտ որակը ակնկալելի է միայն միջնակարգ կրթության պատշաճ զարգացման պարագայում: Ուստի համալսարանը խթանում է դպրոցի հետ կապը մի շարք ուղղություններով՝ դրան նպատակամղելով նորաստեղծ մինչ-համալսարանական կրթության կենտրոնի բազմակողմ գործունեությունը:

Համալսարանի վերափոխման 17-ամյա գործունեության արդյունքները վկայում են, որ ինքնապահպանման և կայուն գործառնական շնորհիվ նախադրյալներ են ստեղծվել նրա առաջընթացի համար: Վերափոխումը փակ համակարգ չէ. նրա գումարելիների թիվն աճում է՝ համալսարանական կրթության հունի մեջ առնելով մշակութային բոլոր բաղադրիչները և այն վերածելով համապետական ու համազգային խնդրի

....Միջազգային բարձրագույն կրթությունը հարուստ է ուսուցման և պատրաստության ձևերով: Այդուհանդերձ, առաջատար երկրներում բնակչությունը բարձրագույն կրթություն է ստանում հիմնականում համալսարանական մասնագիտություններով: Փաստորեն համալսարանական պատրաստություն ունեցողներն են կազմում միջազգային հանրության մտավոր սերունգը, որը լուծում է համերկրային հիմնախնդիրները և ձևավորում համաշխարհային նոր քաղաքակրթությունը: Նման հանձնառությունը մեծ պարտավորություն է դնում համալսարանների կառավարման պատասխանատուների և կրթական քաղաքականություն մշակողների վրա: Այսօր աշխարհում գնահատվում է չորս համալսարանական մոդել:

ա) **Անգլիական համալսարանում** հատուկ ուշադրություն է դարձվում ուսանողի անձի զարգացմանը և բնավորության ձևավորմանը:

բ) **Գերմանական համալսարանին** բնորոշ է գիտական հետազոտությունների գերակայությունը, ընդ որում, դրանց արդյունքները հաջողությամբ օգտագործվում են ուսումնական գործընթացում:

գ) **Ֆրանսիական համալսարանում** հատուկ նշանակություն է տրվում մասնագիտական կողմնորոշմանը: Հաճախ այն անվանում են ուսուցանող մոդել. գիտահետազոտական աշխատանքների գե-

րակշիռ մասը կատարվում է արտահամալսարանական սեկտորից դուրս:

դ) **Ամերիկյան համալսարանը** համարվում է աշխարհում լավագույնը: Այն հայտնի է որպես հետազոտական համալսարան, որը կրթության և գիտության ինտեգրացման ժամանակակից ձև է: Թեև հետազոտական համալսարանը եվրոպական երևույթ է, սակայն աննախադեպ զարգացում է ստացել ԱՄՆ-ում: Ամերիկյան համալսարանների հայեցակարգում լավագույնս միահյուսվել են վաղ միջնադարյան համալսարանների դեմոկրատական ավանդույթները և գերմանական համալսարանների պրագմատիզմը: XXI դարի կեսին ամերիկյան համալսարանները վերածվեցին կրթական, հետազոտական և գիտաարտադրական հզոր համալիրների: Այդ համակարգում աստիճանաբար առանձնացավ հետազոտական համալսարանը՝ որպես տարածաշրջանի զարգացման հզոր գործոն: Այսօր զարգացած երկրների լավագույն համալսարանները վերակողմնորոշվում են դեպի հետազոտական համալսարան: ԵՊՀ-ն անում է ամեն հնարավորը, որ 25 տարի անց միջազգային չափանիշներով լինի գլոբալ հետազոտական համալսարան: Իր հերթին «Համալսարանները XXI դարում» զայցբուրգյան մշտական սեմինարն առաջարկել է համալսարանների դասակարգման նոր՝ եռանկյուն մոդել, ըստ որի՝ համալսարանի զարգացումն ունի երեք ուղղվածություն՝ պետություն (հասարակություն), անձ և շուկա:

Երևանի պետական համալսարան. հայկական համալսարանի մոդել: Վերափոխման շնորհիվ համամարդկային և ազգային մշակութային արժեքների ներածումը, ոչ թե սոսկ մասնագետների, այլ մշակութակիրների պատրաստումը հատուկ պատասխանատվություն է դնում ԵՊՀ-ի վրա՝ այն վերածելով գիտամշակութային զարգացման ազգային կենտրոնի: Եվ հենց սա՝ մշակութայնացումն է դիտվում իբրև ապագա ԵՊՀ հիմնական տարբերիչ գիծ: Մշակութային արժեքների վրա հիմնված համալսարանական կրթությունը սփյուռքահայ երիտասարդությանը կապում է Հայաստանին: Տարբեր մշակույթներ կրող հայազգի (հայաստանցի և սփյուռքահայ) դասախոսների և ուսանողների համատեղ գործունեությունը ակնկալելի

կղարձնի ոչ միայն համալսարանական կրթության նոր որակ, այլև հայության մտքի թռիչք: Հիշենք՝ կիլիկյան ծաղկուն մշակույթը համահայկական ստեղծագործություն էր:

Եվ այսպես՝ երկու՝ միջազգային և ներազգային ուղղությամբ ԵՊՀ-ի հաղորդակցության ընդլայնումը ենթադրում է զարգացման ուրույն ճանապարհ: Ազգային համալսարանում տարամշակույթ հայերի ուսուցման կազմակերպումը միտվելու է նախ՝ հայության ներազգային ինտեգրացմանը՝ ապահովելու նրա թռիչքային զարգացումը, ապա և՝ միջազգային ինտեգրացմանը՝ գրավելու իր պատշաճ տեղը ժողովուրդների ընտանիքում: Առաջարկվող մոդելը յուրատեսակ անդրազգային համալսարան է, բայց, ի տարբերություն համաշխարհային համալսարանի գաղափարի, տարամշակույթ ուսուցումը կազմակերպվում է նույն ազգի ներկայացուցիչների համար՝ մշակութային ընդհանուր հիմքով: Ըստ մեր մոդելի՝ համալսարանների զալքբուրգյան եռանկյունին փոխարկվում է քառանկյան՝ որպես չորրորդ գագաթ առաջարկելով մշակույթը:

Այսպիսով՝ Երևանի պետական համալսարանը միջազգային համալսարանական կրթության զարգացման ընդհանուր հուն է մտնում՝ նրա մեջ բացելով ազգային մշակույթի ակունքները և փորձելով գործառել իբրև նոր՝ մշակութակենտրոն մոդել.....

«Գիտության աշխարհում», 2009, № 4, էջ 28-31

Հայագիտության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները [Զեկուցում]

Այսօր գլոբալացվող աշխարհը նորանոր խնդիրներ է առաջադրում: Ամենուրեք ծավալվող գիտական ու մշակութային համաշխարհային ընդհանուր զարգացումներում ինտեգրվելուց զատ մեզ համար առաջնայինը շարունակում է մնալ ազգապահպանումը: Այս համատեքստում ռազմավարական մեծ նշանակություն է ձեռք բերում հայագիտությունը՝ որպես գիտահետազոտական բնագավառի գերակա ուղղություն:

Որո՞նք են հայագիտության զարգացմանը միտված մեր անելիքները:

